

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լորդ Սոլսբերիի մահը:—Անգլիական պահպանողականների թնորոշ կողմնադիր:—Անգլիական պահպանողականների բրիտանիզմը:—Յոյների բրիտանիզմը:—ՊառաՎ. հաղորդ. Բիսոյի ռուս հիւպ. սպանութեան առիթով:—
Չափի մուտքած հողը ռուսաց կայսրուհուն Ուրմիայում

Մի տարի է արդէն, որ մարկիզ Սոլսբերին հեռացած էր պետական գործունէութիւնից. ֆիզիկական մահը շատ շուտ վրայ հասաւ նրա հասարակական-քաղաքական մահից յետոյ: Իր կեանքի 73 տարիներից 50 նա նուիրեց իր հայրենիքին, որի ամենահարուստ և մեծանուն ընտանիքներից, անգլիական արքայատոհմի շատաւիշներից մէկին էր ինքը: Սոլսբերին անգլիական պահպանողականութեան տիպիկ ներկայացուցիչներից էր: Սակայն պահպանողական խօսքը անգլիական քաղաքական կուսակցութիւնների նկատմամբ չը պէտք է այնպէս հասկանալ, ինչպէս այլ երկրներում, որովհետև անգլիական պահպանողականները երբէք չեն պաշտպանում այնպիսի կարգերի գոյութիւնը, որոնք այլևս չեն վայելում հասարակական կարծիքի մեծամասնութեան համակրանքը: Անգլիական պահպանողականները շատ անգամ իրանք են իրադրոծել այն բեֆորմները, որոնց դէմ սկզբում իրանք մաքառել են, այդպէս օրինակ՝ Իրլանդիայի ինքնավարութեան հարցում: Անգլիական պահպանողականը ձգտելով պահպանել գոյութիւն ունեցող կարգերը՝ դէմ չէ դրանց աստիճանական բարեփոխութեան և երբէք յետ գնալու, բէակցիոն ձգտումների կողմնակից չէ եղել. նա դիտէ ժամանակին զիջել և նոյնիսկ իր վրայ վերցնել

որոշ ազատական բեֆոմներ իրադրութեամբ իսկ անձի ազատութեան, վարչութեան քմահաճոյքների օրինական սահմանափակումների մէջ անգլիացի կոնսերվատորը նոյնքան ազատամիտ է, որքան և լիբերալը ժողովրդի ներկայացուցիչների մեծամասնութեան հաւանութիւն դտած որոշումները կամ օրէնքները միատեսակ են գործադրուում բոլոր անգլիական հպատակների վրայ ժողովրդից ընտրուած անկախ դատաստանը հաւասար աչքով է նայում բոլոր մարդկանց վրայ Անգլիայում սահմանադրական ընտրութիւն, տեղական ինքնավարութիւնը—մարմին և արիւն են դառել իւրաքանչիւր անգլիացու մէջ, և այդ հիմնական հարցերում անգլիացի պահպանողականը չի տարբերուում լիբերալից։ Մեր Հայերով իսկապէս պէտք է անգլիական կոնսերվատիզմը կոչել լիբերալիզմ, իսկ նրա լիբերալիզմը—դեմոկրատիզմ։ Սակայն մի հարց կայ, որի մէջ անգլիական պահպանողականութիւնը զգալ է տալիս իր նմանութիւնը եւրոպական կոնսերվատի պահպանողականութեան. այդ նրա անսիրտ, վեհերոտ, եսական վերաբերմունքն է արեւելեան հարցում։ Պահպանել կազմալուծողութիւնքի, որպէսդ Ռուսիան աւելի առաջ չը գնայ մերձաւոր Արեւելքում—անգլիական կոնսերվատիզմի մի *idée fixe* է, որին պատրաստ է նա զոհել մանր ազդութիւնների գոյութիւնն անգամ։ Այդպէս նա վարուեց 1878 թւականին. 1896 թւականին Սոլսբերին կարծես ուզեց չեղուել այդ աւանդական ուղղութիւնից, սակայն թունդ ճառերից դէնը դրնալու կամքի ոյժ չ'ունեցաւ և յետ նահանջից ռուսական դիպլոմատիայի առաջ, գտնելով որ անգլիական նաւատորմիղը անգոր է անցնել Տաւրոսի լեռներով... Բնականաբար Սոլսբերին չէր կարող վայելել արեւելեան քրիստոնեաների համակրանքը, ինչպէս նրա հակառակորդ Գլադստոնը և առհասարակ անգլիական լիբերալիզմը, որը արեւելեան հարցում այլ ուղղութեան է հետևում։

Վերին աստիճանի զգոյշ, վեհերոտ վերաբերմունք դէպի թիւրքական գործերը չարունակում է ցոյց տալ և Սոլսբերիի յաջորդ Բալֆուրը։ Մակեդոնական հարցում Անգլիայի չէղդութիւնը ուղղակի յանցաւոր Հայերի է համարում։

Լ. Ս.